

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ»

Նախարարների Չորրորդ Կոնֆերանս

*Օրիուս, Դանիա
23-25 հունիսի 1998թ.*



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐՑԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ
ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

ԿՈՆՎԵՆՏԻԱ
ԿՈՆՎԵՆՏԻԱ

**ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ**



ՀՏԴ 502 : 06

ԳՄԴ 20.1

Շ 958

Շ 958 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐՅԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատրաստվել է հրատարակվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:



ԱՍՈՂԻԿ Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

ISBN 978-9939-50-106-2

ԳՄԴ 20.1



Հարգելի՛ ընթերցող,

Ինձ հաճելի է ներկայացնել Ձեզ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» 1998թ. Օրհուսի կոնվենցիայի տեքստի հայերեն թարգմանությունը, որը նախաձեռնել և իրականացրել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտատեսական կենտրոնը:

Հայաստանի Հանրապետությունը Օրհուսի կոնվենցիան վավերացրել է 2001թ. մայիսի 14-ին՝ և որպես փաստաթուղթը վավերացրած 16-րդ պետություն՝ ապահովել է կոնվենցիայի օրինական ուժի մեջ մտնելը:

Օրհուսի կոնվենցիան մեծ քայլ է առաջ ինչպես շրջակա միջավայրի պահպանության, այնպես էլ երկրում իրավունքի գերակայության և ժողովրդավարության ամրապնդման համար: Կոնվենցիայի դրույթների իմացությունն անհրաժեշտ է ինչպես շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գործող պետական մարմինների, այնպես էլ քաղաքացիական հասարակության բոլոր անդամների համար:

Օրհուսի կոնվենցիան այլ միջազգային-իրավական փաստաթղթերից առանձնանում է նրանով, որ մշակվել է հասարակայնության անդամների ակտիվ մասնակցությամբ: Ի տարբերություն այլ կոնվենցիաների, որոնք սահմանում են միմյանց նկատմամբ պետությունների պարտականությունները, Օրհուսի կոնվենցիան ամրագրում է պետության պարտականությունն իր հասարակության հանդեպ:

ՀՀ բնապահպանության նախարարությունը Օրհուսի կոնվենցիայի դրույթների իրականացման շրջանակներում ակտիվ-

րեն համագործակցում է միջազգային տարածաշրջանային բնապահպանական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ: Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից նոր էջ է բացվել տարածաշրջանի երկրների միջև դրական համագործակցության ծավալման համար, քանի որ Օրհուսի կոնվենցիան ոչ միայն իրական քայլ է շրջակա միջավայրի պահպանության, այլ նաև ժողովրդավարական ինստիտուտների զարգացման գործում:

Հայաստանում Օրհուսի կոնվենցիայի կիրառման շնորհիվ ձևավորվել է արդյունավետ երկխոսության մթնոլորտ քաղաքացիական հասարակության ինստիտուտների և պետական մարմինների միջև: Այնուամենայնիվ, այս ճանապարհին դեռևս առկա են խոչընդոտներ, որոնք հնարավոր է հաղթահարել միայն և միայն բարի կամքի դրսևորման և հասարակության հետ արգասաբեր համագործակցության արդյունքում:

ՀՀ բնապահպանության նախարար
Արամ Հարությունյան



Дорогой читатель,

Завершая первую декаду нового тысячелетия у нас появляется еще один повод оглянуться на пройденный путь, оценить достижения, проанализировать трудности,

а также подумать над тем, как идти дальше.

В случае с Орхусской конвенцией мы смело можем констатировать, что Конвенция все еще сохраняет свой “вес”: важность и актуальность. Вопросы, затрагиваемые конвенцией не только не устарели, но и проявили себя с новой остротой. Если двадцать лет тому назад изменение климата для большинства населения было из области научной фантастики, то сегодня это наша полная рисков реальность. Если двадцать лет тому назад мы только осознали, что экологические проблемы не могут быть решены в рамках одной страны, без широкого вовлечения общественности, а тем более без выявления их причинно-следственной связи с вопросами демократизации общества, сегодня эти вопросы находятся в повестке дня всех государств и организаций.

Конвенция Европейской экономической комиссии ООН «О доступе к информации, участию общественности в принятии решений и доступе к правосудию по вопросам, касающимся окружающей среды» Орхусская конвенция это международный правовой документ о реализации права человека на жизнь в окружающей среде, благоприятной для его здоровья и благосостояния.

Она сфокусирована на самом главном, без чего не решить ни одну проблему окружающей среды как в национальном, так и глобальном масштабе - вовлечении общественности в процессе подготовки и принятия решений экологических задач и

правоприменительной практике в области экологических прав.

Связь между конвенцией и демократизацией была четко подтверждена в резюме Председателя седьмого Экономического форума Организации по безопасности и сотрудничеству в Европе – ОБСЕ в мае 1999 г. В этом документе странам настоятельно рекомендовалось ратифицировать Орхусскую конвенцию в целях подтверждения их приверженности принципу участия общественности в решении экологических проблем. Совещание сочло, что вопросы, являющиеся предметом этой конвенции, имеют важное значение для безопасности в Европе и рекомендовало инкорпорировать принципы данного документа в Хартию Европейской безопасности ОБСЕ. Годом ранее ОБСЕ, тогда еще Совещание по Безопасности и Сотрудничеству в Европе (СБСЕ), провела важную встречу в Софии, в заключительном акте которой зафиксировано, что “Государства-участники подтверждают еще раз, что они уважают право отдельных групп и организаций, обеспокоенных состоянием окружающей среды беспрепятственно выражать свое мнение, вступать в ассоциации с другими, проводить мирные собрания, а также получать, издавать и распространять информацию по этим вопросам без каких бы то ни было юридических и административных ограничений, несовместимых с положением СБСЕ. Эти лица, группы и организации имеют право участвовать в публичных прениях по экологическим вопросам, а также устанавливать и поддерживать прямые и независимые контакты на национальном и международном уровне”.

Отрадно, что важнейшей составляющей государственной политики Армении в данной области стала ратификация Конвенции в 2001 году, а также конкретные меры по выполнению положений Конвенции. Можно только приветствовать то, что Армения взяла на себя и выполняет обязательства по внедрению и продвижению «зеленой» демократии.

ОБСЕ и другие международные организации оказывают Армении в этом активную поддержку. В рамках этой поддержки осуществляются программы и проекты по продвижению основных принципов Орхусской конвенции. Бюро ОБСЕ в Ереване в сотрудничестве с Министерством охраны природы и Министерством территориального управления основало 13 центров общественной экологической информации в столице и регионах страны, а также специализированный Центр экологического права при факультете правоведения в Ереванском государственном университете. Это - опорные точки развития Орхусского движения в стране. Они обеспечиваются необходимой литературой и техникой, позволяющей выходить на международные информационные системы. Здесь проводятся общественные слушания по различным насущным эколого-правовым проблемам, публичные лекции и доклады, организуются семинары и круглые столы.

Отмечу лишь, что игнорирование или недостаточное внимание к экологическим проблемам, их накапливание могут привести к необратимым последствиям, могут стать причиной дестабилизации внутривнутриполитической обстановки, эскалации напряженности в международных отношениях, отношениях между соседними государствами. И дилемма, которую приходится решать многим странам - обеспечение здоровой среды обитания или экономическая выгода - неотвратимо поворачивается в сторону экологической целесообразности, экологического императива.

Приветствуя конкретные результативные шаги Правительства Армении по выполнению Орхусской конвенции, активную поддержку инициатив, которые самым непосредственным образом касаются взаимоотношений между населением страны и органами управления, ОБСЕ рассчитывает, что задачи решаемые в рамках реализации данной Конвенции, могут быть в конечном итоге успешно осуществлены только в случае, если понимание важности преодоления этих угроз проникнет в сознание простых

граждан, если в повседневной жизни они будут руководствоваться теми принципами, которые заложены в основу этого важнейшего документа. Это одна из главных целей, которую намерено достичь Бюро ОБСЕ в Ереване. Данная публикация является одной из средств на пути к достижению этой цели.

С уважением,
Посол Сергей Петрович Капинос,
Глава Бюро ОБСЕ в Ереване.

Նախաբան

Սույն Կոնվենցիայի Կողմերը՝

հիմնվելով Մարդուն շրջապատող միջավայրի մասին Ստոկ-հոլմյան հռչակագրի առաջին սկզբունքի վրա,

հիմնվելով, նմանապես, Ռիո դե Ժանեյրոյի՝ «Շրջակա միջավայր և զարգացում» հռչակագրի 10-րդ սկզբունքի վրա,

հիմնվելով, այնուհետև, Գլխավոր Ասամբլեայի 1982 թվականի հոկտեմբերի 28-ի՝ «Բնության համաշխարհային Խարտիայի մասին» 37/7 որոշման և 1990 թվականի դեկտեմբերի 14-ի «Անձի բարեկեցության համար առողջ շրջակա միջավայր ապահովելու անհրաժեշտության մասին» 45/94 որոշման վրա,

հիմնվելով Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության՝ 1989 թվականի դեկտեմբերի 8-ին Մայնի Ֆրանկֆուրտում (Գերմանիա) կայացած «Շրջակա միջավայր և առողջություն» Եվրոպական կոնֆերանսում ընդունված «Շրջակա միջավայրի և առողջապահության մասին» Եվրոպական խարտիայի վրա,

հաստատելով շրջակա միջավայրի պահպանության, պաշտպանության, բարելավման և կայուն ու էկոլոգիապես անվտանգ զարգացումն ապահովելու անհրաժեշտությունը,

ճանաչելով շրջակա միջավայրի համարժեք պաշտպանության անհրաժեշտությունը մարդու բարեկեցության ապահովման և մարդու հիմնական իրավունքների, ներառյալ կյանքի իրավունքի իրականացման համար,

ճանաչելով նաև, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջության և բարեկեցության համար նպաստավոր շրջակա միջավայրում, և որ պարտավոր է անհատապես և այլոց հետ համատեղ պահպանել ու բարելավել շրջակա միջավայրը ի օգուտ ներկա և ապագա սերունդների,

համարելով, որ սույն իրավունքի իրականացման և պարտականության կատարման համար տեղեկատվությունը պետք է մատչելի լինի քաղաքացիներին, վերջիններս պետք է ունենան շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու և յղարարատության մատչելիության իրավունք, և գիտակցելով, որ վերոգրյալի կապակցությամբ քաղաքացիներին կարող է անհրաժեշտ լինել օժանդակություն իրենց իրավունքների իրականացման համար,

ճանաչելով, որ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության կատարելագործումը բարձրացնում է ընդունվող որոշումների և դրանց իրագործման որակը, նպաստում է հասարակայնության իրազեկության մակարդակի բարձրացմանը շրջակա միջավայրին առնչվող հարցերի կապակցությամբ, թույլ է տալիս հասարակայնությանը արտահայտել իր մտահոգությունը և հնարավորություն է տալիս պետական մարմիններին պատշաճ ուշադրության արժանացնել այդ մտահոգությունը,

նպատակ ունենալով, այսպիսով, նպաստել որոշումների ընդունման գործընթացի վերահսկելիությանն ու թափանցիկությանը և շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունմանը հասարակայնության աջակցության ընդլայնմանը,

ճանաչելով իշխանության բոլոր ճյուղերում թափանցիկության ցանկալիությունը և առաջարկելով օրենսդիր մարմիններին կիրառել սույն Կոնվենցիայի սկզբունքներն իրենց աշխատանքում,

ճանաչելով նաև, որ հասարակայնությունը պետք է իրազեկված լինի ընթացակարգերին շրջակա միջավայրին առնչվող հարցերով որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու համար, հնարավորություն ունենա ազատորեն օգտվելու դրանցից և իրազեկ լինի դրանց կիրառման եղանակներին,

ճանաչելով այնուհետև անհատ քաղաքացիների, ոչ կառավարական կազմակերպությունների, և մասնավոր հատվածի՝ շրջակա միջավայրի պահպանության գործում ունեցած դերի կարևորությունը,

ցանկալով նպաստել բնապահպանական կրթությանը շրջակա միջավայրի և կայուն զարգացման գործընթացների խորը ըմբռնման նպատակով, և խրախուսել հասարակայնության լայն իրազեկումը շրջակա միջավայրի և կայուն զարգացման վրա ազդուցություն ունեցող որոշումների մասին, և նրա մասնակցությունը այս որոշումների ընդունման գործընթացին,

հաշվի առնելով այս համատեքստում զանգվածային լրատվության միջոցների և կապի էլեկտրոնային կամ ապագայում կիրառվելիք այլ միջոցների օգտագործման կարևորությունը,

ճանաչելով իշխանության մարմինների կողմից ընդունվող որոշումներում էկոլոգիական նկատառումներն ամբողջապես ներառելու կարևորությունը և սրանից բխող անհրաժեշտությունը, որ պետական մարմինները տիրապետեն շրջակա միջավայրի վերաբերյալ ճշգրիտ, համընդգրկուն և նորացված տեղեկատվությանը,

գիտակցելով, որ պետական մարմինները տիրապետում են շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությանը՝ ի շահ հասարակայնության,

գտնելով, որ արդյունավետ դատական պաշտպանության մեխանիզմները պետք է մատչելի լինեն հասարակայնությանը, ներառյալ՝ կազմակերպություններին այնպես, որ նրա օրինական շահերը լինեն պաշտպանված, և ապահովվի օրենքի կիրառումը,

հաշվի առնելով սպառողներին ապրանքների մասին պատշաճ տեղեկատվության տրամադրման անհրաժեշտությունը, շրջակա միջավայրի պաշտպանության տեսակետից հիմնավորված ընտրություն կատարելու հնարավորության ապահովման համար,

ճանաչելով հասարակայնության մտահոգությունը՝ կապված զենեակիկորեն փոփոխված օրգանիզմները շրջակա միջավայր կանխամտածված բաց թողնելու հետ, և այս ոլորտում թափանցիկության բարձրացման և որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության առավել լայն մասնակցության անհրաժեշտությունը,

համոզված լինելով, որ սույն Կոնվենցիայի իրագործումը կնպաստի ժողովրդավարության ամրապնդմանը Միավորված Ազգերի Կազմակերպության Եվրոպական Տնտեսական Հանձնաժողովի (ԵՏՀ) տարածաշրջանում,

ճանաչելով այս առումով ԵՏՀ-ի դերը, և վկայակոչելով, մասնավորապես, ԵՏՀ-ի՝ Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության և շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության Ղեկավար սկզբունքները, որոնք հաստատվել են 1995 թվականի հոկտեմբերի 25-ին Սոֆիայում (Բուլղարիա) կայացած «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» նախարարների երրորդ Կոնֆերանսում ընդունված նախարարական հռչակագրում,

գիտակցելով 1991 թվականի փետրվարի 25-ին Էսպոյում (Ֆինլանդիա) ընդունված՝ «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» Կոնվենցիայի, «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» և «Անդրսահմանային ջրասահութեի և միջազգային լճերի օգտագործման և պահպանության» մասին 1992 թվականի մարտի 17-ին Հելսինկիում ընդունված Կոնվենցիաների, ինչպես նաև այլ տարածաշրջանային կոնվենցիաների համապատասխան դրույթները,

գիտակցելով, որ սույն Կոնվենցիայի ընդունումը կնպաստի «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» գործընթացի հետագա ամրապնդմանը և Օրիուս քաղաքում (Դանիա) 1998 թվականի հունիսին կայացած նախարարների չորրորդ Կոնֆերանսի արդյունքների կյանքի կոչմանը,

համաձայնության եկան ներքոհիշյալի վերաբերյալ՝

Հոդված 1

ՆՊԱՏԱԿԸ

Ներկա և ապագա սերունդների յուրաքանչյուր անդամի առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանությանն օժանդակելու համար սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է շրջակա միջավայրին առնչվող հարցերով տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության իրավունքը:

Հոդված 2

Սահմանումներ

Սույն Կոնվենցիայի նպատակներից ելնելով՝

1. «Կողմ»՝ սույն Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ, եթե տեքստում այլ բան նշված չէ:

2. «Պետական մարմին»՝

ա) վարչական մարմին՝ ազգային, տարածաշրջանային և այլ մակարդակով,

բ) ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք ազգային օրենսդրության համաձայն իրականացնում են պետական վարչական գործառնություններ՝ ներառյալ շրջակա միջավայրի հետ կապված հատուկ պարտականությունները, գործողությունները կամ ծառայությունները,

գ) ցանկացած այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կատարում է շրջակա միջավայրի հետ կապված հանրային պարտականություններ կամ գործառնություններ կամ մատուցում է հանրային ծառայություններ ա) կամ բ) ենթակետերում նշված մարմնի կամ անձի վերահսկողության ներքո:

դ) 17-րդ հոդվածում նշված, սույն Կոնվենցիայի Կողմ հանդիսացող տնտեսական ինտեգրացիայի ցանկացած տարածաշրջանային հիմնարկություն:

Այս սահմանումը չի ներառում դատական և օրենսդիր իշխանության մարմիններն ու ինստիտուտները:

3. «Շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվություն»՝ ցանկացած տեղեկատվություն՝ գրավոր, տեսաձայնային, էլեկտրոնային կամ այլ նյութական կրիչի վրա, հետևյալի մասին.

ա) շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի, ինչպիսիք են օդը և մթնոլորտը, ջրերը, բնահողը, հողը, լանդշաֆտը և բնական օբյեկտները, կենսաբազմազանությունը և նրա բաղադրիչները, ներառյալ՝ գենետիկորեն փոփոխված օրգանիզմները և փոխազդեցությունը նշված բաղադրիչների միջև,

բ) այնպիսի գործոնների, ինչպիսիք են նյութերը, էներգիան, աղմուկը և ճառագայթումը, ինչպես նաև գործունեությունը կամ միջոցները, ներառյալ՝ վարչական միջոցները, շրջակա միջավայրի ոլորտի համաձայնագրերը, քաղաքականությունները, օրենսդրությունը, պլանները և ծրագրերը, որոնք ազդում են կամ կարող են ազդել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա՝ ա) ենթակետի իմաստով, ծախսեր-արդյունքներ հարաբերակցությունը, և այլ տնտեսական վերլուծություններ ու ենթադրություններ, որոնք հաշվի են առնվում շրջակա միջավայրի առնչությամբ որոշումներ ընդունելիս,

գ) մարդկանց առողջության և անվտանգության, կենսապայմանների, մշակութային օբյեկտների և շինությունների մասին այնքանով, որքանով դրանք կրում են կամ կարող են կրել շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի, կամ այդ բաղադրիչներով միջնորդավորված ազդակների, գործունեության կամ վերը՝ բ) ենթակետում հիշատակված միջոցների, ազդեցությունը:

4. «Հասարակայնություն»՝ մեկ կամ ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձ, և համաձայն ազգային օրենսդրության կամ պրակտիկայի՝ դրանց միություններ, կազմակերպություններ կամ խմբեր:

5. «Շահագրգիռ հասարակայնություն»՝ շրջակա միջավայրին վերաբերող հարցերով որոշումների ընդունման գործընթացի արդյունքում ազդեցություն կրող և/կամ նման ազդեցության ենթակա և/կամ նշված գործընթացում շահագրգռվածություն ունեցող հասարակայնություն. ելնելով սույն սահմանման իմաստից՝ շրջակա միջավայրի պահպանության հարցերով զարգվող և ազգային օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին համապատասխանող ոչ կառավարական կազմակերպությունները համարվում են շահագրգիռ կազմակերպություններ:

Հոդված 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է անհրաժեշտ օրենսդրական, կանոնակարգող և այլ միջոցներ, ներառյալ միջոցներ՝ ուղղված սույն կոնվենցիայի տեղեկատվության մատչելիության, հասարակայնության մասնակցության, արդարադատության մատչելիության դրույթների իրականացումը կարգավորող նորմերի համատեղելիությանը, ինչպես նաև պատշաճ միջոցներ ուղղված այդ դրույթների կիրառման ապահովմանը՝ սույն Կոնվենցիայի դրույթների իմպլեմենտացիայի նպատակով՝ հստակ, թափանցիկ և համաձայնեցված դաշտ ձևավորելու համար:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձգտի ապահովել, որպեսզի պաշտոնատար անձինք և պետական մարմինները շրջակա միջավայրին առնչվող հարցերով ցուցաբերեն աջակցություն հասարակայնությանը և ուղղորդեն նրան տեղեկատվության մատչելիության հարցում, աջակցեն նրան որոշումների ընդունման գործընթացին և արդարադատության իրականացմանը մասնակցելու գործում:

3. Յուրաքանչյուր Կողմ նպաստում է էկոլոգիական կրթությանը և շրջակա միջավայրի հիմնահարցերի կապակցությամբ հասարակայնության իրազեկության մակարդակի բարձրացմանը, մասնավորապես՝ շրջակա միջավայրին առնչվող հարցերով տեղե-

կատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին մասնակցության և արդարադատության մատչելիության վերաբերյալ:

4. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միությունների, կազմակերպությունների կամ խմբերի պատշաճ ճանաչումը և ցուցաբերի համապատասխան աջակցություն վերջիններիս, և ապահովի իր ազգային իրավական համակարգի համապատասխանությունը սույն պարտավորությանը:

5. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն սահմանափակում որևէ Կողմի իրավունքը շարունակել իրագործել կամ ձեռք առնել շրջակա միջավայրին առնչվող հարցերի վերաբերյալ տեղեկատվության ավելի լայն մատչելիություն, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության ավելի ակտիվ մասնակցություն և արդարադատության ավելի լայն մատչելիություն նախատեսող միջոցներ, քան դա նախատեսված է սույն Կոնվենցիայով:

6. Սույն Կոնվենցիան չի կարող նախատեսել շրջակա միջավայրին առնչվող հարցերով տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության գոյություն ունեցող իրավունքների որևէ սահմանափակում:

7. Յուրաքանչյուր Կողմ աջակցում է սույն Կոնվենցիայի սկզբունքների կիրառմանը շրջակա միջավայրին առնչվող հարցերով որոշումների ընդունման միջազգային գործընթացներում և միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

8. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան իրենց իրավունքներն իրականացնող անձինք չենթարկվեն պատժի, հետապնդման կամ հալածանքի՝ անկախ նրանց ներգրավվածության ձևից: Սույն դրույթը չի կարող սահմանափակել ազգային դատարանների իրավասությունը՝ զանձել ողջամիտ գումար դատական ծախսերի դիմաց:

9. Սույն Կոնվենցիայի համապատասխան դրույթների շրջանակներում հասարակայնությունն ունի շրջակա միջավայրին առնչվող հարցերով տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու և արդարադատության մատչելիության իրավունք՝ անկախ քաղաքացիությունից, ազգային պատկանելիությունից կամ բնակության վայրից, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ անկախ նրա գրանցման կամ գործունեության հիմնական վայրից:

Հոդված 4

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ սույն հոդվածի ներքոհիշյալ կետերին հետևելու դեպքում պետական մարմինները, ի պատասխան շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվության տրամադրման հարցման, ազգային օրենսդրության շրջանակներում հասարակայնությանը տրամադրեն այդպիսի տեղեկատվություն, ներառյալ՝ այդպիսի տեղեկատվություն պարունակող կամ ներառող փաստաթղթերի պատճենները՝ անհրաժեշտության դեպքում և ներքոհիշյալ բ) կետին համապատասխան՝

ա) առանց իր շահագրգռվածությունը ձևակերպելու անհրաժեշտության.

բ) պահանջված ձևով, եթե՝

- պետական մարմինը չի հիմնավորում տեղեկատվությունն այլ ձևով ներկայացնելու անհրաժեշտությունը. այս դեպքում տեղեկատվությունը տվյալ ձևով տրամադրելու հիմնավորումը պետք է լինի պատճառաբանված,
- հասարակայնությանն այլ ձևով արդեն իսկ չի տրամադրվել հարցվող տեղեկատվությունը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված՝ շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվությունը պետք է տրամադրվի ա-

ռավելագույն սեղմ ժամկետներում, սակայն հարցման ներկայացման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս հետո, եթե միայն համապատասխան տեղեկատվության ծավալը և բարդությունը չեն արդարացնում այդ ժամկետի երկարաձգումը մինչև երկու ամիս՝ հարցման ներկայացման օրվանից սկսած: Հարցումը ներկայացնողը պետք է տեղեկացվի այդ ժամկետի ցանկացած երկարաձգման և նման որոշման ընդունումն արդարացնող պատճառների մասին:

3. Շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվություն ստանալու կապակցությամբ կատարված հարցումը կարող է մերժվել, եթե՝

ա) հարցումը ստացած պետական մարմինը չի տիրապետում շրջակա միջավայրին վերաբերող հարցվող տեղեկատվությանը.

բ) հարցումն ակնհայտորեն անհիմն է կամ ձևակերպված է չափազանց ընդհանուր ձևով կամ

գ) հարցումն առնչվում է նյութերի, որոնք գտնվում են նախապատրաստման վերջնական փուլում կամ վերաբերում է պետական մարմինների ներքին գրագրությանը, եթե նման բացառություն նախատեսված է ազգային օրենսդրությամբ կամ ձևավորված պրակտիկայով՝ հաշվի առնելով հասարակայնության շահագրգռվածությունը այդ տեղեկատվության հրապարակման հարցում:

4. Շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվություն ստանալու կապակցությամբ կատարված հարցումը կարող է մերժվել, եթե այդպիսի տեղեկատվության հրապարակումը բացասաբար կանդիդատնա՝

ա) պետական մարմինների գործունեության գաղտնիության վրա,, եթե այդպիսի գաղտնիություն նախատեսված է ազգային օրենսդրությամբ.

բ) միջազգային հարաբերությունների, ազգային պաշտպանության կամ հանրային անվտանգության վրա.

գ) արդարադատության իրականացման, անձանց՝ արդար դատական քննության իրավունքի վրա կամ պետական մարմին-

ների՝ քրեական կամ կարգապահական գործերով քննություններ անցկացնելու կարողության վրա.

դ) առևտրային և արդյունաբերական տեղեկատվության գաղտնիության վրա՝ այն դեպքերում, եթե նման գաղտնիությունը օրինական տնտեսական շահերի պաշտպանության նպատակով պահպանվում է օրենքով: Այս շրջանակներում շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող արտանետումների մասին տեղեկատվությունը ենթակա է բացահայտման.

ե) մտավոր սեփականության իրավունքի վրա.

զ) անձնական տվյալների և/կամ ֆիզիկական անձանց վերաբերող արխիվների գաղտնիության վրա, եթե համապատասխան ֆիզիկական անձը չի տվել համաձայնություն տրամադրել այդպիսի տեղեկատվություն հասարակայնությանը՝ ելնելով ազգային օրենսդրության պահանջներից.

է) հարցվող տեղեկատվությունը ներկայացրած երրորդ կողմի շահերի վրա, եթե այդ կողմը չի կրում նման ձևով վարվելու իրավական պարտականություն, կամ եթե այդ կողմի վրա չի կարող դրվել այդպիսի պարտավորություն, և այն դեպքերում, երբ այդ կողմը չի տվել համաձայնություն՝ հրապարակելու համապատասխան տեղեկատվությունը, կամ

ը) շրջակա միջավայրի վրա, որին վերաբերում է այդ տեղեկատվությունը, օրինակ՝ հազվագյուտ տեսակների բազմացման վայրերի մասին:

Մերժման վերոհիշյալ հիմքերը ենթակա են սահմանափակ մեկնաբանման՝ հաշվի առնելով այդ տեղեկատվության հրապարակման հարցում հասարակայնության շահագրգռվածությունը և այն, թե արդյոք հարցվող տեղեկատվությունն առնչվում է շրջակա միջավայր կատարվող արտանետումներին:

5. Եթե պետական մարմինը չի տիրապետում շրջակա միջավայրին վերաբերող հարցվող տեղեկատվությանը, այդ պետական մարմինը հնարավորինս սեղմ ժամկետներում տեղեկացնում է հարցումը ներկայացնողին այն պետական մարմնի մասին, որին գտնում է՝ կարելի է դիմել տեղեկատվություն ստանալու պահանջ

ջով, կամ հանձնում է այդ հարցումը համապատասխան մարմնին և պատշաճ ձևով տեղյակ է պահում հարցումը ներկայացնողին:

6. Յուրաքանչյուր կողմ ապահովում է, որ այն դեպքերում, երբ տեղեկությունը ենթակա չէ հրապարակման ըստ վերը նշված 3-րդ կետի գ) ենթակետի և 4-րդ կետի, պետք է առանձնացվի ընդահնուր տեղեկատվությունից՝ չխախտելով հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության գաղտնիությունը, և տրամադրվի պետական մարմինների կողմից:

7. Եթե տեղեկատվության տրամադրման հարցումը ներկայացվել է գրավոր ձևով կամ եթե հարցումը ներկայացնողը խնդրում է այդ մասին, ապա մերժումը նույնպես պետք է տրվի գրավոր ձևով: Մերժման մեջ նշվում են դրա հիմքերը, և տրվում է համապատասխան տեղեկատվություն ընդունված որոշման վերանայման ընթացակարգի մատչելիության մասին՝ 9-րդ հոդվածին համապատասխան: Տեղեկատվություն տրամադրելու մասին հարցման մերժումը տրամադվում է հնարավորինս սեղմ ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան մեկ ամիս հետո, եթե միայն տեղեկատվության բարոյությունը չի արդարացնում այդ ժամկետի երկարաձգումը մինչև երկու ամիս՝ սկսած հարցման ներկայացման պահից: Խնդրանքը ներկայացնողը տեղեկացվում է այդ ժամկետի ցանկացած երկարաձգման և դրա պատճառների մասին:

8. Յուրաքանչյուր Կողմ կարող է թույլատրել իր պետական մարմիններին գանձել վճար տեղեկատվության տրամադրման դիմաց պայմանով, որ այդ վճարը չի գերազանցում ողջամիտ չափը: Տեղեկատվության տրամադրման համար վճար գանձելու մտադրություն ունեցող պետական մարմինները տեղեկացնում են հարցումը ներկայացնողներին վճարի դրույքաչափերի մասին, որոնց համապատասխան կատարվում է գանձում՝ նշելով այն պայմանները, որոնք նախատեսում են վճարների գանձում կամ ազատում են դրանց գանձումից, և այն դեպքերը, երբ տեղեկատվությունը տրամադրվում է այդպիսի վճարի նախնական գանձման պայմանով:

Հոդված 5

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱԶՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ՝

ա) պետական մարմինները տիրապետեն և թարմացնեն իրենց գործառնություններին առնչվող շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվությունը.

բ) ստեղծվեն պարտադիր համակարգեր, որոնք կապահովեն դեպի պետական մարմիններ շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունեցող նախատեսվող կամ իրականացվող գործունեության վերաբերյալ տեղեկատվության պատշաճ հոսքեր.

գ) մարդու առողջությանը կամ շրջակա միջավայրին սպառնացող ցանկացած վտանգի դեպքում, որը առաջանում է մարդու գործունեության կամ բնական պատճառների հետևանքով, այդ մասին ամբողջ տեղեկատվությունը, որը կարող է հնարավորություն ընձեռել հասարակայնությանը միջոցներ ձեռք առնել այդպիսի սպառնալիքի հետ կապված վնասի հետևանքների կանխարգելման կամ մեղմացման ուղղությամբ, և որին տիրապետում է պետական մարմինը, անհապաղ և առանց ուշացման տարածվի հասարակայնության այն անդամների շրջանում, որոնք կարող են տուժել այդ սպառնալիքից:

2. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է ապահովել, որ ազգային օրենսդրության շրջանակներում պետական մարմինների կողմից հասարակայնությանը շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգերը լինեն հասկանալի, և շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվությունը՝ դյուրամատչելի, *inter alia*, այդ թվում նաև հետևյալ ճանապարհներով.

ա) տրամադրել բավարար տեղեկատվություն հասարակայնությանը համապատասխան պետական մարմինների տրամադրության ներքո գտնվող շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվության տեսակների և դրա շրջանակի մասին, ինչ-

պես նաև այդպիսի տեղեկատվության մատչելիությունը և հասանելիությունը սահմանող հիմնական պայմանների, միջոցների և տեղեկատվության ստացման ընթացակարգի մասին.

բ) այնպիսի գործնական միջոցների կազմակերպում և հետագա գործառնման ապահովում, ինչպիսիք են՝

1. հասարակայնության համար մատչելի ցուցակները, ռեզիստրները կամ արխիվները,
2. սույն Կոնվենցիայի համաձայն՝ հասարակայնությանը տեղեկատվության մատչելիության հարցում աջակցություն ցուցաբերելու պարտականության սահմանում պաշտոնատար անձանց համար,
3. կապի կետերի առանձնացում և

գ) ցուցակներում, ռեզիստրներում կամ արխիվներում պարունակվող շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվության անվճար մատչելիություն՝ համաձայն վերը նշված բ) կետի 1-ին ենթակետի:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է Էկոլոգիական տեղեկատվության ծավալի աստիճանական մատչելիությունը տվյալների էլեկտրոնային բազաների միջոցով, որոնք դյուրամատչելի են հասարակայնության համար կապի հանրային համակարգերով: Այս ձևով մատչելի տեղեկատվությունն իր մեջ պետք է ընդգրկի՝

ա) ներքոհիշյալ 4-րդ կետում հիշատակվող շրջակա միջավայրի վիճակի մասին զեկույցները.

բ) շրջակա միջավայրին վերաբերյալ կամ դրան առնչվող օրենսդրական ակտերի տեքստերը.

գ) համապատասխան դեպքերում շրջակա միջավայրի վերաբերյալ կամ դրան առնչվող քաղաքականությունները, պլանները և ծրագրերը, ինչպես նաև բնապահպանական համաձայնագրերը

դ) այլ տեղեկատվություն՝ այն չափով, որչափով նշված տեղեկատվության առկայությունն այդ ձևով կօժանդակի ազգային օրենսդրության մեջ սույն Կոնվենցիայի իմպլեմենտացիային պայմանով, որ այդպիսի տեղեկատվությունն արդեն հասանելի

է էլեկտրոնային ձևով:

4. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է երեք կամ չորս տարին չզերազանցող կանոնավոր ինտերվալներով հրապարակել և տարածել շրջակա միջավայրի վիճակի մասին ազգային զեկույց, ներառյալ՝ տեղեկատվություն շրջակա միջավայրի որակի մասին և տեղեկատվություն շրջակա միջավայրի ծանրաբեռնվածության մասին:

5. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է ազգային օրենսդրության շրջանակներում ձեռք առնել միջոցներ՝ տարածելու, *inter alia*,

ա) օրենսդրական ակտեր և կանոնակարգող փաստաթղթեր, ինչպիսիք են շրջակա միջավայրի ոլորտում ռազմավարությունների, քաղաքականությունների հարցերով փաստաթղթերը, ծրագրերը և գործողությունների պլանները և դրանց իրագործման ընթացքի վերաբերյալ կառավարության տարբեր մակարդակներում պատրաստված զեկույցները.

բ) շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ միջազգային պայմանագրեր, կովենցիաներ և համաձայնագրեր.

գ) անհրաժեշտության դեպքում՝ շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ այլ կարևոր միջազգային փաստաթղթեր:

6. Յուրաքանչյուր Կողմ խրախուսում է իրենց գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա էական ազդեցությունում ունեցող օպերատորներին, որպեսզի վերջիններս պարբերաբար տեղեկացնեն հասարակայնությանն իրենց գործունեության և արտադրանքի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության մասին՝ համապատասխան դեպքերում կամավոր էկոպիտակավորման և/կամ էկոլոգիական աուդիտի կիրառման շրջանակներում կամ այլ միջոցներով:

4. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է՝

ա) հրատարակել փաստեր և դրանց վերլուծությունը, որոնք համարում է անհրաժեշտ և կարևոր էկոլոգիական քաղաքականության հիմնական նպատակների մշակման համար.

բ) հրատարակել Կոնվենցիայի գործողության ոլորտի մեջ մտնող հարցերի առնչությամբ հասարակայնության հետ ունեցած կապերի մասին առկա բացատրական նյութերը և/կամ այլ ձևով ապահովել դրանց մատչելիությունը, հասանելիությունը և

գ) պատշաճ ձևով տրամադրել տեղեկատվություն պետական մարմինների՝ շրջակա միջավայրի հետ կապված գործառույթների իրականացնելու կամ բնակչությանը հանրային ծառայություններ մատուցելու մասին:

5. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է մշակել մեխանիզմներ հասարակայնությանը արտադրանքի մասին բավարար տեղեկատվություն տրամադրելու նպատակով այն ձևով, որը հնարավորություն կընձեռի սպառողներին կատարել շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից հիմնավորված ընտրություն:

6. Հաշվի առնելով միջազգային մակարդակում ընթացող գործընթացները՝ յուրաքանչյուր Կողմ պարտավոր է ձեռք առնել միջոցներ փոխհամաձայնեցված համապետական աղտոտիչների կադաստրի կամ ռեգիստրների ազգային համակարգի աստիճանական ձևավորման համար՝ օգտագործելով կանոնակարգված, թվայնացված և հասարակայնության համար մատչելի տվյալների բազա՝ կազմված հաշվետվությունների տրամադրման ստանդարտացված համակարգի հիման վրա: Այդպիսի համակարգը կարող է ներառել որոշակի նյութերի և արտադրատեսակների ներանցման, արտանետման և տեղափոխման՝ ներառյալ ջրերի, էներգիայի և ռեսուրսների օգտագործման մասին տվյալներ, որոնք ստացվում են շրջակա բնական միջավայրում իրականացվող կոնկրետ գործունեության և տեղում կամ կողմնակի վերամշակման և հեռացման կայանքների գործունեության արդյունքում:

7. Սույն հոդվածում ամրագրված որևէ դրույթ չի կարող սահմանափակել Կողմերի իրավունքը՝ մերժելու շրջակա միջավայրին վերաբերող որոշակի տեղեկատվության տրամադրման վերաբերյալ հարցումը՝ 4-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան:

Հոդված 6

ՀԱՄԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿՈՆԿՐԵՏ ՏԵՄԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ

1. Յուրաքանչյուր Կողմ`

ա) պարտավոր է կիրառել սույն հոդվածի դրույթները 1-ին հավելվածում թվարկված նախատեսվող գործունեության տեսակների թույլատվության վերաբերյալ որոշումներ կայացնելիս.

բ) պարտավոր է նաև իր ազգային օրենսդրությանը համապատասխան` կիրառել սույն հոդվածի դրույթները հավելված 1-ում չնշված նախատեսվող գործունեության տեսակների թույլատվության վերաբերյալ որոշումներ կայացնելիս, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Այս նպատակով Կողմերը պարտավոր են որոշել, թե արդյոք ծրագրվող գործունեության տվյալ տեսակն ընդգրկվում է այս դրույթներում, և

գ) կարող է, եթե դա նախատեսված է ազգային օրենսդրությամբ, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշում ընդունել սույն հոդվածի դրույթները նախատեսվող գործունեության տեսակի նկատմամբ չկիրառելու մասին` ելնելով ազգային անվտանգության շահերից, եթե Կողմը գտնում է, որ սույն հոդվածի կիրառումը կարող է բացասաբար ազդել այդ շահերի վրա:

2. Շահագրգիռ հասարակայնությունը շրջակա միջավայրին առնչվող հարցերով որոշումների ընդունման գործընթացի վաղ փուլում պետք է, ելնելով հանգամանքներից, հրապարակային ծանուցման կամ անհատական կարգով պատշաճ ձևով, ժամանակին և արդյունավետորեն տեկացվի, *inter alia*, հետևյալի մասին`

ա) նախատեսվող գործունեության տեսակի և այն հայտի մասին, ըստ որի պետք է ընդունվի որոշումը.

բ) հնարավոր որոշումների բնույթի կամ որոշման նախագծի

մասին,

զ) որոշում ընդունելու համար պատասխանատու պետական մարմնի մասին,

դ) նախատեսվող ընթացակարգի մասին՝ ներառյալ այն, թե ինչ ձևով և երբ կարող է տրամադրվել տեղեկատվությունը.

- 1) ընթացակարգի մեկնարկի մասին.
- 2) հասարակայնության մասնակցության հնարավորությունների մասին.
- 3) ցանկացած նախատեսվող հասարակական լսման ժամանակի և վայրի մասին.
- 4) պետական մարմնի մասին, որից կարելի է ստանալ համապատասխան տեղեկատվություն, և այն մասին, թե որտեղ է գտնվում համապատասխան տեղեկատվությունը, որին հասարակայնությունը կարող է ծանոթանալ,
- 5) համապատասխան պետական մարմնի կամ ցանկացած այլ պաշտոնական մարմնի մասին, որին կարող են ներկայացվել դիտողություններ կամ հարցեր, և դիտողությունների կամ հարցերի ներկայացման ժամանակացույցի մասին, և
- 6) այն մասին, թե ինչ էկոլոգիական տեղեկատվություն է առկա նախատեսվող գործունեության վերաբերյալ.

ե) այն մասին, թե արդյոք տվյալ գործունեության տեսակը հանդիսանում է ազգային կամ անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման առարկա:

3. Հասարակայնության մասնակցության ընթացակարգերի տարբեր փուլերի համար պետք է նախատեսվեն ողջամիտ ժամկետներ, որոնք վերը նշված 2-րդ կետին համապատասխան կապահովեն բավարար ժամանակ հասարակայնության իրազեկման, նախապատրաստման և շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին արդյունավետ մասնակցության համար:

4. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է հասարակայնության մասնակցությունը վաղ փուլում, երբ բաց են բոլոր տարբերակների դիտարկման հնարավորությունները, և հասարակայնության մասնակցությունը կարող է արդյունավետ լինել:

5. Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր Կողմ խրախուսում է պոտենցիալ հայտատուին, որպեսզի վերջինս մինչև թույլատվություն ստանալու համար հայտ ներկայացնելը որոշի շահագրգիռ հասարակայնության շրջանակը, անցկացնի քննարկումներ և ապահովի տեղեկատվություն հայտի նպատակների վերաբերյալ:

6. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է պահանջել իրավասու պետական մարմիններից, որպեսզի վերջիններս անհրաժեշտության դեպքում ազգային օրենսդրության համապատասխան շահագրգիռ հասարակայնության համար ապահովեն հնարավորություն՝ հասանելի դառնալուն պես, ըստ հարցման անվճար ծանոթանալու որոշումների ընդունման ընթացակարգերին վերաբերող սույն հոդվածում հիշատակված ամբողջ տեղեկատվությունը, որը հասանելի կլինի հասարակայնության մասնակցության ժամանակ, առանց սահմանափակելու Կողմերի իրավունքը մերժելու որոշակի տեղեկատվության տրամադրումը՝ 4-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան: Համապատասխան տեղեկատվությունը, առանց խախտելու 4-րդ հոդվածի դրույթները, պետք է առնվազն ներառի՝

ա) արդյունաբերական օբյեկտի նկարագրությունը և նախատեսվող գործունեության ֆիզիկական և տեխնիկական բնութագրերը, ներառյալ՝ ենթադրվող թափոնների և արտանետումների գնահատականը.

բ) շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության էական ազդեցության նկարագրությունը.

գ) այն միջոցների նկարագրությունը, որոնք նախատեսված են ազդեցության, ներառյալ՝ արտանետումների, կանխարգելման և/կամ նվազեցման համար.

դ) վերոհիշյալի ոչ տեխնիկական ամփոփագիրը.

ե) հիմնական այլընտրանքային տարբերակները, որոնք դի-

տարկվել են հայտատուի կողմից, և

զ) ազգային օրենսդրության համապատասխան՝ պետական մարմիններին վերը նշված 2-րդ պարագրաֆին համապատասխան շահագրգիռ հասարակայնությանը իրագեկելու ժամանակ ներկայացված առաջարկությունները և հաշվետվությունները:

7. Հասարակայնության մասնակցության ընթացակարգերը պետք է թույլատրեն վերջինիս գրավոր ձևով կամ անհրաժեշտ դեպքերում հայտատուի մասնակցությամբ տեղի ունեցող հասարակական լսումների կամ նախաձեռնության քննարկման ժամանակ ներկայացնել նախատեսվող գործունեությանն առնչվող ցանկացած բնույթի դիտողություններ, տեղեկատվություն, վերլուծություններ կամ կարծիքներ:

8. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է ապահովել հասարակայնության մասնակցության արդյունքների պատշաճ արտացոլումը ընդունվող որոշման մեջ:

9. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է համապատասխան ընթացակարգերի պահպանմամբ ապահովել պետական մարմինների ընդունած որոշումների վերաբերյալ հասարակության պատշաճ իրագեկումը: Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է որոշման տեքստը՝ ներառյալ դրա ընդունման հիմքում դրված պատճառները և նկատառումները, ներկայացնել հասարակայնությանը:

10. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է ապահովել 2-9-րդ կետերի դրույթների կիրառումը *mutatis mutandis*, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այն դեպքերում, երբ պետական մարմինը վերանայում կամ նորացնում է սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված գործունեության իրականացման պայմանները:

11. Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է իր ազգային օրենսդրության շրջանակներում հնարավորինս և պատշաճ ձևով կիրառել սույն հոդվածի դրույթներն այն որոշումների նկատմամբ, որոնք առնչվում են գեներտիկորեն փոփոխված օրգանիզմները շրջակա միջավայր կանխամտածված ձևով ազատ արձակելու թույլատվությունների տրամադրմանը:

Հոդված 7

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՍԱՆԸ, ՈՐՈՆՔ ԱՌՆՉՎՈՒՄ ԵՆ ՇՐՋԱԿԱ ՄԻ- ՋԱՎԱՅՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԼԱՆՆԵՐԻՆ, ԾՐԱԳՐԵՐԻՆ ԵՎ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է սահմանել նորմ-մեխանիզմներ և/կամ այլ դրույթներ, որոնք սահմանում են թափանցիկ և արդարացի կառույցի շրջանակներում շրջակա միջավայրին առնչվող պլանների և ծրագրերի նախապատրաստմանը հասարակայնության մասնակցության ընթացակարգ՝ տրամադրելով հասարակայնությանն անհրաժեշտ տեղեկատվություն: Այդ կառույցի գործառնման ընթացքում կիրառվում են 6-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 8-րդ կետերը: Հաշվի առնելով սույն Կոնվենցիայի նպատակները՝ համապատասխան պետական մարմինը որոշում է սույն գործընթացին մասնակցելու իրավունք ունեցող հասարակայնության շրջանակը: Հնարավորության սահմաններում՝ յուրաքանչյուր Կողմ ջանք է գործադրում ապահովել հասարակայնության մասնակցությունը շրջակա միջավայրի հետ կապված քաղաքականության մշակման գործընթացին:

Հոդված 8

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԻՐԱՌՍԱՆ ՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ ՆՈՐՄԱՏԻՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԻՐԱՌՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱՎԱՔԱՆՈՐԵՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է միջոցներ ձեռնարկել աջակցելու հասարակայնությանը արդյունավետորեն մասնակցել պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն, անմիջական կիրառման ուժ ունեցող նորմատիվ դրույթների և այլ ընդհանուր կիրառում ունեցող իրավաբանորեն պարտադիր ակտերի, նախապատրաստման փուլի ընթացքում,

երբ դեռևս բաց են բոլոր հնարավորությունները: Այդ նպատակով կիրառվում են հետևյալ միջոցները՝

ա) արդյունավետ մասնակցություն ապահովելու համար բավարար ժամկետների սահմանում .

բ) ակտերի նախագծերը պետք է հրապարակվեն կամ այլ ձևով լինեն մատչելի

գ) հասարակայնությանը պետք է ընձեռվի հնարավորություն անմիջականորեն կամ ներկայացուցչական-խորհրդատվական մարմինների միջոցով ներկայացնելու դիտողություններ:

Հասարակայնության մասնակցության արդյունքները պետք է հնարավորինս հաշվի առնվեն:

Հոդված 9

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Յուրաքանչյուր Կողմ ազգային օրենսդրության սահմաններում պարտավոր է ապահովել, որ ցանկացած անձ, ով կարծում է, որ իր՝ 4-րդ հոդվածի պայմաններին համապատասխան ներկայացված տեղեկատվություն ստանալու մասին հարցումը չի քննարկվել, մասամբ կամ ամբողջությամբ անհիմն մերժվել է, պատշաճ ձևով չի բավարարվել կամ այդ հարցման նկատմամբ ցուցաբերվել է սույն հոդվածի դրույթներին չհամապատասխանող մոտեցում, ունենա դատարանում կամ օրենքին համապատասխան ստեղծված այլ անկախ և անկողմնակալ մարմնում ընդունված որոշման վերանայման հնարավորություն:

Այն դեպքերում, երբ նախատեսվում է որոշման վերանայում դատարանում, Կողմն անձի համար ապահովվում է նաև այլ պետական կամ անկախ և անաչառ մարմնի կողմից որոշման վերանայման օրենքով սահմանված վարձատրություն չպահանջող կամ նվազագույն վարձատրություն պահանջող արագ ընթացակարգերի մատչելիություն:

Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ընդունված վերջնական որոշումները պարտադիր են համապատասխան տե-

ղեկատվությունը տիրապետող պետական մարմնի համար: Սույն կետին համապատասխան տեղեկատվության մերժման դեպքում մերժումը պետք է լինի գրավոր պատճառաբանված:

2. Յուրաքանչյուր Կողմ ազգային օրենսդրության շրջանակներում պարտավոր է ապահովել, որ շահագրգիռ հասարակայնության ներկայացուցիչները, ուլքեր՝

ա) ցուցաբերում են բավականաչափ շահագրգռվածություն

կամ՝ որպես այլընտրանքային տարբերակ

բ) համարում են, որ տեղի է ունեցել այս կամ այն իրավունքի խախտում, եթե դա համապատասխան Կողմի վարչական վարույթի նորմերով սահմանվում է որպես նախապայման,

ունենան հնարավորություն, ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և առանց ստորև բերված 3-րդ կետի կամ սույն Կոմվենցիայի այլ համապատասխան դրույթների խախտման, դատարանում և/կամ օրենքին համապատասխան ստեղծված անկախ և անկողմնակալ մարմնում՝ ընդունված որոշումների վերանայման հնարավորություն՝ 6-րդ հոդվածի դրույթների շրջանակներում ընդունված ցանկացած որոշման, կատարված գործողության կամ անգործության օրինականությունը նյութական և ընթացակարգային իրավունքի տեսակետից վիճարկելու նպատակով:

Բավարար շահագրգռվածության առկայությունը և այս կամ այն իրավունքի խախտված լինելը որոշվում է՝ ելնելով ազգային օրենսդրության դրույթներից և սույն Կոմվենցիայի իմաստով շահագրգիռ հասարակայնությանն արդարադատության լայն մատչելիություն ապահովելու նպատակից: Այս իմաստով՝ վերը նշված ա) ենթակետի նպատակի համար բավարար է 2-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներին համապատասխանող ցանկացած ոչ կառավարական կազմակերպության շահագրգռվածությունը: Վերը նշված բ) ենթակետի նպատակների համար այդպիսի կազմակերպությունները իրավունք ունեն նաև հայտարարելու իրենց իրավունքների խախտման մասին:

Սույն կետի դրույթները չեն բացառում վարչական մարմնում նախնական քննության ընթացակարգի կիրառման հնարավորությունը և մինչև քննության դատական ընթացակարգերին դիմելը

վարչական ընթացակարգերի սպառման պահանջի կիրառում, եթե այդպիսի պահանջ նախատեսված է ազգային օրենսդրությամբ:

3. Բացի վերը նշված 1-ին և 2-րդ կետերում հիշատակված ըննության ընթացակարգերից և առանց դրանք խախտելու, յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է ապահովել, որ ազգային օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան, եթե այդպիսիք գոյություն ունեն, հասարակայնության անդամների համար մատչելի լինեն վարչական և դատական ընթացակարգերը՝ վիճարկելու համար մասնավոր անձանց կամ պետական մարմինների՝ շրջակա միջավայրի վերաբերյալ ազգային օրենսդրության նորմերին հակասող գործողությունները կամ անգործությունը:

4. Առանց անտեսելու և խախտելու վերը նշված 1-ին կետում սահմանված ընթացակարգերը, վերոգրյալ 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը պետք է ապահովեն իրավական պաշտպանության համարժեք և արդյունավետ միջոցներ, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, հայցի ապահովման միջոցները, և պետք է լինեն արդարացի, անկողմնակալ, ժամանակին և կապված չլինեն չափազանց մեծ ծախսերի հետ: Սույն հոդվածին համապատասխան ընդունվող որոշումները պետք է ընդունվեն կամ արձանագրվեն գրավոր ձևով: Դատարանների և, հնարավորության դեպքում, այլ մարմինների որոշումները պետք է մատչելի լինեն հասարակայնությանը:

5. Սույն հոդվածի դրույթների արդյունավետության բարձրացման համար յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է ապահովել, որ հասարակայնությանը տրամադրվի տեղեկատվություն որոշումների վերանայման վարչական և դատական ընթացակարգերի մատչելիության մասին և պետք է դիտարկել արդարադատության մատչելիության ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերացման կամ նվազեցման համար օժանդակության տրամադրման համապատասխան մեխանիզմների ստեղծման հարցը:

Հոդված 10

ԿՈՂՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Կողմերի առաջին խորհրդակցությունը հրավիրվում է ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարի անց: Հետագայում Կողմերի հերթական խորհրդակցությունները հրավիրվում են առնվազն յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, եթե Կողմերն այլ որոշում չեն կայացրել, կամ առկա չէ Կողմի գրավոր պահանջով՝ պայմանով, որ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղարի կողմից Կողմի այդ պահանջը բոլոր Կողմերին ուղարկելուց հետո վեց ամսվա ընթացքում, այն արժանանա է Կողմերի ոչ պակաս, քան մեկ երրորդի հավանությունը:

2. Իրենց խորհրդակցությունների ժամանակ Կողմերը հետևում են սույն Կոնվենցիայի ինպլեմենտացիայի ընթացքին՝ հիմք ընդունելով Կողմերի ներկայացրած հերթական զեկույցների հիման վրա և այս նպատակով՝

ա) իրականացնում են շրջակա միջավայրին առնչվող տեղեկատվության մատչելիությանը, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցությանը և արդարադատության մատչելիությանը վերաբերող քաղաքականությունների իրավական և մեթոդոլոգիական մոտեցումների վերլուծություն՝ դրանց կատարելագործման համար.

բ) փոխանակում են սույն Կոնվենցիայի մեկ կամ ավելի Կողմերի մասնակցությամբ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կամ այլ պայմանավորվածությունների կայացման և իրականացման ոլորտում կուտակված փորձի հետ առնչվող տեղեկատվությունը, որը վերաբերում է սույն Կոնվենցիայի նպատակներին.

գ) անհրաժեշտության դեպքում դիմում են ԵՏՀ-ի համապատասխան մարմիններին, ինչպես նաև միջազգային իրավասու այլ մարմիններին և հատուկ կոմիտեներին այն բոլոր մոտեցումների դիտարկման համար, որոնք առնչվում են սույն Կոնվենցիայի նպատակների իրականացմանը.

դ) անհրաժեշտության դեպքում հիմնադրում են ցանկացած օժանդակ մարմին,

ե) սահմանված դեպքերում մշակում են սույն Կոնվենցիայի արձանագրություններ,

զ) քննարկում և հաստատում են սույն Կոնվենցիայի մեջ ուղղումներ մտցնելու մասին առաջարկություններ՝ 14-րդ հոդվածի դրույթներին համապատասխան.

է) քննարկում և ձեռք են առնում սույն Կոնվենցիայի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ հավելյալ գործողություններ.

ը) առաջին խորհրդակցության ժամանակ քննարկում և կոնսենսուսի հիման վրա ընդունում են իրենց և օժանդակ մարմինների խորհրդակցությունների ընթացակարգային կանոնները.

թ) առաջին խորհրդակցության ժամանակ ուսումնասիրում են 5-րդ հոդվածի 9-րդ կետի դրույթների իրականացման ընթացքում կուտակած փորձը և քննարկում են նշված համակարգի զարգացման համար անհրաժեշտ քայլեր ձեռք առնելու հարցը՝ հաշվի առնելով այն գործընթացները և զարգացումները, որոնք տեղի են ունենում միջազգային մակարդակով, ներառյալ՝ ադատիչների՝ շրջակա միջավայր թափանցելու և դրանց փոխադրման ռեգիստրների կամ կադաստրների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի մշակումը, որոնք կարող են դառնալ սույն Կոնվենցիայի հավելված:

3. Անհրաժեշտության դեպքում Կողմերի Խորհրդակցությունը կարող է կոնսենսուսի հիման վրա ձեռք բերել ֆինանսական հարցերով համաձայնություններ:

4. Սույն Կոնվենցիայի Կողմ չհանդիսացող, սակայն 17-րդ հոդվածին համապատասխան սույն Կոնվենցիան ստորագրելու իրավունք ունեցող Միավորված Ազգերի Կազմակերպությունը, նրա մասնագիտացված մարմինները և Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալությունը, ինչպես նաև ցանկացած պետական կամ տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպություն և սույն Կոնվենցիայի գործողությանն առնչվող ոլորտներում գործառող ցանկացած միջկառավարական կազմակեր-

պություն, իրավունք ունեն մասնակցելու Կողմերի խորհրդակցություններին՝ որպես դիտորդ:

5. Սույն Կոնվենցիայի գործողությանն առնչվող ոլորտում մասնագիտացված ցանկացած ոչ-կառավարական կազմակերպություն, որը տեղեկացրել է Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Գործադիր քարտուղարին իր՝ Կողմերի խորհրդակցությանը ներկա լինելու ցանկության մասին, իրավունք ունի մասնակցելու որպես դիտորդ, եթե դրա դեմ չեն առարկել խորհրդակցությանը ներկա Կողմերի առնվազն մեկ երրորդը:

6. Վերը նշված 4-րդ և 5-րդ կետերի նպատակներից ելնելով՝ 2-րդ ենթակետում նախատեսված ընթացակարգային նորմերը սահմանում են թույլտվության ընթացակարգի պրակտիկ համապատասխան մեխանիզմներ և այլ պայմանները:

Հոդված 11

ՉԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Բացառությամբ ստորև բերված 2-րդ կետով նախատեսված դեպքերի՝ սույն Կոնվենցիայի յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայն:

2. Տնտեսական ինտեգրացման տարածաշրջանային կազմակերպություններն իրենց իրավասության ոլորտում գտնվող հարցերով ձայնի իրավունքն իրականացնում են, իրենց անդամ, սույն Կոնվենցիայի Կողմ հանդիսացող պետությունների ձայների քանակին համապատասխան: Այդ կազմակերպությունները չեն կարող իրականացնել ձայնի իրավունքը, եթե դրանց անդամ-պետություններն իրականացնում են իրենց ձայնի իրավունքը և հակառակը:

Հոդված 12

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Գործադիր քարտուղարն իրականացնում է քարտուղարության հետևյալ գործառույթները.

ա) հրավիրում և նախապատրաստում է Կողմերի խորհրդակցությունները,

բ) կողմերին է փոխանցում Կոնվենցիայի դրույթներին համապատասխան ներկայացված զեկույցները և այլ տեղեկատվություն, և

գ) իրականացնում է Կողմերի սահմանած այլ գործառույթներ:

Հոդված 13

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ

Սույն Կոնվենցիայի հավելվածները դրա անքակտելի մասն են:

Հոդված 14

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՈՒՂՂՈՒՄՆԵՐԸ

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է առաջարկել սույն Կոնվենցիայի ուղղումներ:

2. Սույն Կոնվենցիայի՝ առաջարկվող ցանկացած ուղղման տեքստը գրավոր ձևով ներկայացվում է Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Գործադիր քարտուղարին, ով այն ուղարկում է բոլոր Կողմերին՝ Կողմերի այն խորհրդակցությունից առնվազն 90 օր առաջ, որտեղ տվյալ ուղղումը ներկայացվելու է հաստատման:

3. Կողմերը գործադրում են բոլոր ջանքերը սույն Կոնվենցիայի ցանկացած ուղղման վերաբերյալ կոնսենսուսի հիման վրա համաձայնության գալու ուղղությամբ: Եթե կոնսենսուսի հասնելու բոլոր հնարավորությունները սպառված են, և ձեռք չի բերվել որևէ համաձայնությունը, ապա ուղղումն ընդունվում է Խորհրդակցությանը ներկա և քվեարկությանը մասնակցող Կողմերի ձայների երեք քառորդով:

4. Վերը նշված 3-րդ կետին համապատասխան ընդունված սույն Կոնվենցիայի ուղղումները Դեպոզիտարիան ուղարկում է բոլոր Կողմերին՝ վավերացման, հաստատման, կամ ընդունման համար: Բացի հավելվածի ուղղումներից, սույն Կոնվենցիայի ուղղումները դրանք վավերացրած, հաստատած կամ ընդունած Կողմերի համար ուժի մեջ են մտնում Կողմերի առնվազն երեք քառորդի կոմից վավերացման հավաստագրերը Դեպոզիտարիայի կողմից ստանալու օրվանից 90 օր հետո:

5. Ցանկացած Կողմ, որը չի կարող հաստատել սույն Կոնվենցիայի հավելվածի որևէ ուղղում, այդ մասին գրավոր ձևով տեղեկացնում է Դեպոզիտարիային՝ ընդունման մասին տեղեկագիր ստանալու օրվանից հետո տասներկու ամսվա ընթացքում: Դեպոզիտարիան անհապաղ հաղորդում է բոլոր Կողմերին ցանկացած այդպիսի տեղեկագրի ստացման մասին: Կողմը կարող է ցանկացած ժամանակ ընդունել ուղղումները՝ հրաժարվելով իր նախկին հայտարարությունից, և այդ Կողմի համար տվյալ հավելվածի համապատասխան ուղղումներն ուժի մեջ են մտնում վավերացման հավաստագիր Դեպոզիտարի հանձնելուց հետո:

6. Վերը նշված 4-րդ կետին համապատասխան՝ Դեպոզիտարի կողմից տեղեկագրի ստացման օրվանից տասներկու ամիս հետո, հավելվածի ուղղումն ուժի մեջ է մտնում միայն այն Կողմերի համար, որոնք վերը նշված 5-րդ կետի դրույթներին համապատասխան Դեպոզիտարիային տեղեկագրեր չեն ներկայացրել պայմանով, որ Կողմերի թվի ոչ ավելի, քան մեկ երրորդը ներկայացրել է այդպիսի տեղեկագիր:

7. Սույն հոդվածի նպատակների համար, «քվեարկությանը ներկա և մասնակցած Կողմերն» այն Կողմերն են, որոնք ներկա են և քվեարկում են «կողմ» կամ «դեմ»:

Հողված 15

ՀԱՍՏՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԶՆՆԱՐԿՈՒՄԸ

Կողմերի Խորհրդակցությունը կոնսենսուսի հիման վրա սահմանում է ոչ կոնֆրոնտացիոն, ոչ դատական և խորհրդատվական բնույթի լրացուցիչ միջոցներ՝ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխանության քննարկման համար: Այս միջոցներն ապահովում են հասարակայնության պատշաճ մասնակցությունը և կարող են ներառել սույն Կոնվենցիային առնչվող հարցերով հասարակայնության ներկայացուցիչների դիմումների քննարկման հնարավորությունը:

Հողված 16

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ երկու կամ ավելի Կողմերի միջև վեճ առաջանալու դեպքում նրանք պետք է ձգտեն լուծում գտնել բանակցությունների միջոցով կամ վեճի կողմերի համար ընդունելի լուծման որևէ այլ եղանակով:

2. Սույն Կոնվենցիայի ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու ժամանակ կամ դրանից հետո ցանկացած ժամանակ Կողմը կարող է Դեպոզիտարիային գրավոր դիմում ուղարկել այն մասին, որ վերը նշված 1-ին կետի դրույթներին համապատասխան չլուծված վեճի համար նա ընդունում է վեճի լուծման հետևյալ պարտադիր միջոցներից մեկը կամ երկուսը, իր վրա այդպիսի պարտավորություն վերցնող ցանկացած Կողմի հետ հարաբերություններում:

ա) վեճի հանձնում Միջազգային Դատարան,

բ) արբիտրաժ՝ 2-րդ հավելվածում սահմանված ընթացակարգին համապատասխան:

3. Եթե վեճի կողմերն ընդունել են վեճի լուծման վերը նշված 2-րդ կետում հիշատակված երկու միջոցներն էլ, ապա վեճը կարող

է հանձնվել միայն Միջազգային Դատարան, եթե Կողմերն այլ բան չեն նախատեսել:

Հոդված 17

ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ

Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Օրիուս քաղաքում (Դանիա) 1998 թվականի հունիսի 25-ին, այնուհետև՝ Միավորված Ազգերի Կազմակերպության Կենտրոնական Գրասենյակում (Նյու-Յորք) մինչև 1998 թվականի դեկտեմբերի 21-ը՝ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների համար, ինչպես նաև այն պետությունների համար, որոնք Եվրոպական տնտեսական հանձնաժողովում ունեն խորհրդատվական կարգավիճակ՝ համաձայն Տնտեսական և Սոցիալական Խորհրդի 1947 թվականի մարտի 28-ի թիվ 36 (IV) որոշման 8-րդ և 11-րդ կետերի, և Եվրոպական տնտեսական խորհրդի անդամ ինքնիշխան պետությունների հիմնադրած տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպությունների համար, որոնց անդամ պետությունները փոխանցել են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ իրավասություններ, ներառյալ՝ այդ հարցերին առնչվող համաձայնագրեր կնքելու իրավասությունը:

Հոդված 18

ԴԵՊՈԶԻՏԱՐ

Որպես սույն Կոնվենցիայի Դեպոզիտար հանդես է գալիս Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարը:

Հոդված 19

ՎԱՎԵՐԱՑՈՒՄԸ, ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՄԻԱՆԱԼԸ

1. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման այն ստորագրած պետությունների և տարա-

ծաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպությունների կողմից:

2. Սույն Կոնվենցիան 1998 թվականի դեկտեմբերի 22-ից բաց է միանալու՝ 17-րդ հոդվածում նշված պետությունների և տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն կազմակերպությունների համար:

3. Վերը նշված 2-րդ կետում չհիշատակված ցանկացած այլ պետություն, որը հանդիսասանում է Սիավորված Ազգերի Կազմակերպության անդամ, Կողմերի Խորհրդակցության համաձայնությամբ կարող է միանալ Կոնվենցիային:

4. 17-րդ հոդվածում հիշատակված ցանկացած կազմակերպություն, որը դառնում է սույն Կոնվենցիայի Կողմ, եթե այդ կազմակերպության անդամ-պետություններից որևէ մեկը չի հանդիսանում սույն Կոնվենցիայի Կողմ, ստանձնում է Կոնվենցիայով նախատեսված բոլոր պարտականությունները: Եթե այդպիսի կազմակերպությունների անդամ-պետություններից առնվազն մեկը հանդիսանում է Կոնվենցիայի Կողմ, ապա տվյալ կազմակերպությունը և նրա անդամ-պետությունները ստանձնում են պարտավորություն կատարելու Կոնվենցիայով նախատեսված պարտականությունները: Նման դեպքերում տվյալ կազմակերպությունը և նրա անդամ-պետությունները չեն կարող միաժամանակ օգտվել Կոնվենցիայով նախատեսված իրավունքներից:

5. 17-րդ հոդվածում հիշատակված տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային կազմակերպություններն վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթղթերում հայտարարում են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ իրենց իրավասության սահմանների մասին: Այս կազմակերպությունները նաև տեղեկացնում են Դեպոզիտարին իրենց իրավասությունների շրջանակների բոլոր էական փոփոխությունների մասին:

Հողված 20

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին 16-րդ փաստաթուղթն ի պահ տալուց հետո 90-րդ օրը:

2. Վերը նշված 1-ին կետի նպատակների համար ցանկացած փաստաթուղթ, որն ի պահ է տրվել տնտեսական ինտեգրացիայի տարածաշրջանային որևէ կազմակերպության կողմից, չի համարվում հավելյալ այն փաստաթղթերին, որոնք ի պահ են տրվել այդպիսի կազմակերպության անդամ-պետությունների կողմից:

3. 17-րդ հոդվածում նշված և սույն Կոնվենցիան վավերացնող, ընդունող կամ հաստատող կամ միացող յուրաքանչյուր պետության կամ կազմակերպության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդպիսի պետության կամ կազմակերպության կողմից վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին 16-րդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո 90-րդ օրը:

Հողված 21

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

Կողմի համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո երեք տարի անց՝ ցանկացած ժամանակ, այդ Կողմը կարող է դուրս գալ Կոնվենցիայից՝ զրավոր ծանուցագիր ուղարկելով Դեպոզիտարին: Ցանկացած այդպիսի հրաժարում մտնում է ուժի մեջ Դեպոզիտարի կողմից դուրս գալու մասին ծանուցագիրը ստանալուց հետո 90-րդ օրը:

Հողված 22

ԱՈՒՏԵՆՏԻԿ ՏԵՔՍՏԵՐ

Սույն Կոնվենցիայի բնօրինակը, որի անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարապես աուտենտիկ են, հանձն-

վում է ի պահ Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ի ՀԱՍՏԱՏՈՒԽՆ ՈՐԻ ներքոստորագրյալները, որոնք դրա համար պատշաճ ձևով լիազորված են, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

ԿԱՏԱՐՎԱԾ Է Օրինու քաղաքում (Դանիա) հազար ինը հարյուր իննսունուր թվականի հունիսի քսանհինգին:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ա) ԵՆԹԱԿԵՏՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Էներգետիկա՝

- նավթամշակման և գազամշակման գործարաններ.
- գազաֆիկացման և գազի հեղուկացման կայանքներ.
- ջերմային էլեկտրակայաններ և այլման համար նախատեսված այլ կայանքներ 50 մեգավատ (ՄՎՏ) կամ ավելի ջերմային հզորությամբ.
- կոքսային վառարաններ.
- ատոմային էլեկտրակայաններ և այլ ատոմային ռեակտորներ, ներառյալ՝ այդպիսի էլեկտրակայանների կամ ռեակտորների¹ (բացառությամբ տրոհվող և վերակազմվող նյութերի արտադրության և կոնվենցիայի համար նախատեսված գիտահետազոտական կայանքների, որոնց առավելագույն հզորությունը չի գերազանցում 1ԿՎՄ մշտական ջերմային հզորությունը) ապամոնտաժումը կամ շահագործումից հանելը.
- ճառագայթահարված միջուկային վառելիքի վերամշակման կայանքներ.
- կայանքներ, որոնք նախատեսված են՝

- միջուկային վառելիքի արտադրության կամ հարստացման համար.
- ճառագայթահարված միջուկային վառելիքի կամ ռադիոակտիվ թափոնների վերամշակման համար.
- ճառագայթահարված միջուկային վառելիքի վերջնական հեռացման համար.
- բացառապես ռադիոակտիվ թափոնների վերջնական հեռացման համար.
- բացառապես ճառագայթահարված միջուկային վառելիքի կամ ռադիոակտիվ թափոնների պահպանության համար (պլանավորված ավելի քան տասը տարվա համար) արտադրական օբյեկտի տարածքի սահմաններից դուրս այլ վայրերում:

2. Մետաղների արտադրություն և վերամշակում՝

ա) մետաղական հանքանյութերի (ներառյալ՝ սուլֆիդային հանքանյութերի) թրծման և ազլոմերացիայի կայանքներ.

բ) կայանքներ վերամշակված թուջի կամ պողպատի (առաջնային կամ երկրորդային ձուլում) արտադրման համար, ներառյալ՝ անընդհատ տարլցում այնպիսի արտադրողականությամբ, որը գերազանցում է ժամում 2.5 տոննա հզորությունը.

գ) սև մետաղների վերամշակման կայանքներ՝

- 1) տաք գլոցանման հաստոցներ, որոնց հզորությունը գերազանցում է ժամում 20 տոննա հում պողպատ հզորությունը.
- 2) դարբնոցային մուրճեր, որոնց էներգիան գերազանցում է 50 ԿՋուղ հզորությունը մեկ մուրճի հաշվով, իսկ սպառվող ջերմային հզորությունը գերազանցում է 20 ՄՎտ մեծությունը.
- 3) պաշտպանիչ մետաղական ծածկույթների փշում հում պողպատի մատուցմամբ, որի քանակը գերազանցում է ժամում 2 տոննա մեծությունը.

դ) կայանքներ, որոնք նախատեսված են՝

- 1) հանքանյութից, խտանյութից կամ երկրորդային հումքային նյութերից ոչ ապաօքսիդացված գունավոր մետաղների արտադրության համար՝ մետալուրգիական,

քիմիական կամ էլեկտրոլիտիկ պրոցեսների օգտագործմամբ.

- 2) գունավոր մետաղների ձուլամշակման համար, ներառյալ՝ լեգիրացում, այդ թվում՝ արտադրատեսակների ռեկուպերացիա, ռաֆինացում, ձուլագործական արտադրություն և այլն ձուլման այնպիսի հզորությամբ, որը գերազանցում է օրական 4 տոննա մեծությունը՝ կապարի և կադմիումի համար կամ 20 տոննա մեծությունը՝ այլ մետաղների համար.

ե) կայանքներ մետաղների և պլաստմասսաների մակերեսային մշակման համար՝ էլեկտրոլիտիկ կամ քիմիական պրոցեսների կիրառմամբ, երբ վերամշակման համար օգտագործվող անոթների չաների ծավալը գերազանցում է 30 խորանարդ մետրը:

3. Հանքանյութի վերամշակման արդյունաբերություն՝

ա) պտտվող թրծման վառարաններում ցեմենտի կլինկերի արտադրության համար նախատեսված կայանքներ, որոնց արտադրական հզորությունը գերազանցում է օրական 500 տոննա մեծությունը, կամ պտտվող թրծման վառարաններում կրի արտադրության համար նախատեսված կայանքներ, որոնց օրական արտադրական հզորությունը գերազանցում է 50 տոննան.

բ) ասբեստի արտադրության և ասբեստ պարունակող նյութերի պատրաստման համար նախատեսված կայանքներ.

գ) ապակու, ներառյալ՝ ապակեթելի արտադրության համար նախատեսված կայանքներ, որոնց հալոցային հզորությունը գերազանցում է օրական 20 տոննա մեծությունը.

դ) հանքային նյութերի հալեցման համար նախատեսված կայանքներ, ներառյալ՝ հանքային մանրաթելի արտադրությունը, որի հալոցային հզորությունը գերազանցում է օրական 20 տոննա մեծությունը.

ե) թրծման միջոցով կերամիկական արտադրատեսակների արտադրության համար նախատեսված կայանքներ, մասնավորապես՝ տանիքի կղմինդրի, աղյուսի, հրակայուն աղյուսի, կերամիկական սալիկի, քարե կերամիկայի կամ ճենապակե

իրերի արտադրության համար, որի արտադրական հզորությունը գերազանցում է օրական 75 տոննա մեծությունը և/կամ 4 խորանարդ մետր հզորություն ունեցող թրծման վառարաններ, որոնց շարման խտությունը գերազանցում է 300 կգ/մ խորանարդ մեծությունը:

4. Քիմիական արդյունաբերության՝ սույն կետում բերված կատեգորիաների սահմաններում արտադրությունը նշանակում է արդյունաբերական մասշտաբներով արտադրություն՝ ա) և է) ենթակետերում բերված նյութերի կամ նյութերի խմբերի քիմիական վերամշակման միջոցով՝

ա) քիմիական կայանքներ, որոնք նախատեսված են հիմնական օրգանական քիմիական նյութերի արտադրության համար, որպիսիք են՝

- 1) պարզ ածխաջրածինները գծային կամ ցիկլիկ, հագեցված կամ չհագեցված, ալիֆատիկ կամ արոմատիկ,
- 2) թթվածին պարունակող ածխաջրածինները, որպիսիք են սպիրտները, ալդեհիդները, կետոնները, կարբոնալիան թթուները, բարդ եթերները, ալդոստերոլները, պարզ եթերները, պերօքսիդները, էպօքսիդային խեժերը,
- 3) ծծմբային ածխաջրածինները,
- 4) ազոտական ածխաջրածինները, որպիսիք են ամինները, ամիդները, ազոտական միացությունները, նիտրոմիացությունները կամ նիտրատները, նիտրիլները, ցիանատները, իզոցիանատները,
- 5) ֆոսֆոր պարունակող ածխաջրածինները,
- 6) հալոգենացված ածխաջրածինները,
- 7) օրգանամետաղական միացությունները,
- 8) հիմնական պլաստմասաները՝ պոլիմերներ, սինթետիկ մանրաթելեր և մանրաթելեր ցելյուլոզայի հիման վրա,
- 9) սինթետիկ կաուչուկը,
- 10) ներկերը և պիգմենտները,
- 11) մակերեսային ակտիվ նյութերը.

բ) հիմնական անօրգանական նյութերի արտադրության համար նախատեսված կայանքներ, որպիսիք են՝

- 1) գազային նյութերը, որպիսիք են ամոնյակը, քլորը կամ

ըլորաջրածինը, ֆտորը կամ ֆտորաջրածինը, ածխածնի օքսիդերը, ծծմբի միացությունները, ազոտի օքսիդները, ջրածինը, ծծմբի երկօքսիդը, ածխածնի ըլորօքսիդը,

- 2) թթուները, որպիսիք են քրոմային թթուն, ֆտորաջրածնական թթուն, ֆոսֆորական թթուն, ֆոսֆորային թթուն, ազոտական թթուն, ըլորաջրածնական թթուն, ծծմբական թթուն, օլեումը, ծծմբային թթուն,
- 3) հիմքերը, որպիսիք են ամոնիումի հիդրօքսիդը, կալիումի հիդրօքսիդը, նատրիումի հիդրօքսիդը,
- 4) աղերը, որպիսիք են ամոնիումի ըլորիդը, կալիումի ըլորօքսիդը, կալիումի կարբոնատը, նատրիումի կարբոնատը, պերբորատը, արծաթի նիտրատը,
- 5) ոչ մետաղները, մետաղների օքսիդները և այլ անօրգանական միացությունները, որպիսիք են կալցիումի կարբիդը, սիլիցիումը, սիլիցիումի կարբիդը,
- գ) ֆոսֆորային, ազոտական կամ կալիումական հանքային պարարտանյութերի (պարզ կամ բարդ պարարտանյութերի) արտադրության համար նախատեսված քիմիական կայանքներ,
- դ) քիմիական կայանքներ բուսաբուծության համար նախատեսված նյութերի և բիոցիդների արտադրության համար,
- ե) կայանքներ, որտեղ օգտագործվում են քիմիական կամ կենսաբանական պրոցեսներ հիմնական դեղագործական արտադրատեսակների արտադրության համար,
- զ) պայթուցիկ նյութերի արտադրության համար նախատեսված քիմիական կայանքներ,
- է) քիմիական արտադրության կայանքներ, որտեղ քիմիական կամ կենսաբանական գործընթացները կիրառվում են սպիտակուցային սննդային հավելումների, ֆերմենտների և այլ սպիտակուցային նյութերի արտադրության համար:

5. Թափոնների մշակում և հեռացում՝

ա) վտանգավոր թափոնների այրման, ռեկուպերացիայի, քիմիական մշակման կամ թաղման համար նախատեսված կայանքներ,

բ) կոմունալ-կենցաղային թափոնների այրման համար նախատեսված կայանքներ՝ ժամում 3 տոննան գերազանցող հզորությամբ,

գ) ոչ վտանգավոր թափոնների հեռացման համար նախատեսված կայանքներ՝ օրը 50 տոննան գերազանցող հզորությամբ,

դ) աղբանոցներ, որտեղ թափվում է օրական ավելի քան 10 տոննա աղբ կամ 25000 տոննա ընդհանուր ծավալը գերազանցող աղբ՝ բացառությամբ չեզոք թափոնների համար նախատեսված աղբանոցները:

6. Կեղտաջրերի մաքրման համար նախատեսված կայանքներ, որոնց հզորությունը գերազանցում է 150 000 բնակչությանը համարժեք մեծությունը:

7. Արդյունաբերական կայանքներ հետևյալ նպատակների համար՝

ա) փայտանյութից ցելյուլոզայի կամ մման մանրաթելային նյութերի արտադրություն,

բ) թղթի և ստվարաթղթի արտադրություն, որի օրական հզորությունը գերազանցում է 20 տոննա մեծությունը:

8. ա) Հեռավոր հաղորդակցության երկաթուղային գծերի և օդանավակայանների² կառուցում, որոնց հիմնական թռիչքային ուղու երկարությունը հավասար է կամ գերազանցում է 2100 մետրը,

բ) ավտոմայրուղիների և արագընթաց ճանապարհների³ կառուցում,

գ) նոր ճանապարհների կառուցում, որոնք ունեն երթևեկության չորս կամ ավելի շարքեր կամ գոյություն ունեցող ճանապարհների վերակառուցում և /կամ լայնացում, որոնք ունեն երթևեկության երկու կամ պակաս շարք՝ նրանց չորս կամ ավելի շարք ունեցող ճանապարհներ վերածելու նպատակով, այնտեղ, որտեղ այդպիսի նոր ճանապարհը կամ վերակառուցվող և/կամ լայնացվող հատվածը ունենալու է 10կմ կամ ավելի անընդհատ երկարություն,

9. ա) ներքին նավագնացության համար նախատեսված ներքին ջրային ուղիները և նավահանգիստները, որոնք թույլ են տալիս ավելի քան 1350 տոննա տարողություն ունեցող նավերի անցումը,

բ) առևտրային նավահանգիստները, բեռնաթափման և բեռնաբարձման նավամատույցները, որոնք կապված են ափամերձ և դուրս բերված նավահանգիստների հետ (բացառությամբ լաստանավերի նավամատույցները), որոնք կարող են ընդունել ավելի քան 1350 տոննա տարողություն ունեցող նավեր:

10. Ստորգետնյա ջրերի վերցնում կամ ստորգետնյա ջրերի համալրման արհեստական համակարգեր, որոնց վերցման կամ համալրման ծավալը համարժեք է կամ գերազանցում է 10 մլն - մետր/տարին:

11. ա) Ջրային ավազանների միջև ջրային ռեսուրսների տեղափոխման աշխատանքներ, երբ այդպիսի տեղափոխումն ու վերաբաշխումն ուղղված է ջրի հնարավոր պակասը կանխելուն, և տեղափոխվող ջրի տարեկան ծավալը գերազանցում է 100 մլն խորանարդ մետրը.

բ) բոլոր այլ դեպքերում գետերի ավազանների միջև ջրային ռեսուրսների տեղափոխման հետ կապված աշխատանքներում, երբ ջրի վերցման միջին բազմամյա հոսքը գերազանցում է տարեկան 2000 մլն խորանարդ մետրը, և երբ տեղափոխվող ջրի ծավալը գերազանցում է այդ հոսքի 5%ը:

Այս երկու դեպքերում էլ բացառվում է խողովակաշարային խմելու ջրի տեղափոխումը:

12. Նավթի և բնական գազի արդյունահանում առևտրային նպատակներով, երբ արդյունահանման քանակը գերազանցում է օրական 500 տոննան՝ նավթի դեպքում և օրական 500 000 խորանարդ մետրը՝ գազի դեպքում:

13. Ջրի ամբարման կամ մշտական պահպանման համար նախատեսված ամբարտակներ և այլ օբյեկտներ, որոնց համար ջրի նոր լցված կամ հավելյալ ամբարված քանակը գերազանցում է 10 մլն խորանարդ մետրը:

14. Խողովակաշարեր գազի, նավթի կամ քիմիական նյութերի տեղափոխման համար 800 մմ-ից ավելի տրամագծով և 40 կմ-ից ավելի երկարությամբ:

15. Կայանքների թռչունների կամ խոզերի ինտենսիվ բուծման համար, որոնցում նախատեսված են ավելի քան՝

ա) 40 000 տեղ թռչնի համար.

բ) 2 000 տեղ 30 կգ- ից ավելի քաշով բովոլո խոզերի համար կամ

գ) 750 տեղ խոզամայրերի համար:

16. Հանքերի և օգտակար հանածոների բաց եղանակով արդյունահանում, երբ տեղամասի մակերեսը գերազանցում է 25 հեկտարը, կամ տորֆի արդյունահանում, երբ տեղամասի մակերեսը գերազանցում է 150 հեկտարը:

17. Էլեկտրահաղորդման օղային գծերի կառուցում 220 Կվտ - կամ ավելի բարձր լարվածությամբ և ավելի քան 15 կմ երկարությամբ:

18. Կայանքներ նավթի, նավթաքիմիական կամ քիմիական նյութերի պահեստավորման համար՝ 200 000 տոննա կամ ավելի տարողությամբ:

19. Գործունեության այլ տեսակներ՝

- կայանքներ մանրաթելի կամ տեքստիլի նախնական վերամշակման այնպիսի գործողություններ, որպիսիք են լվացումը, սպիտակեցումը, մերսերիզացիան կամ ներկման համար, որտեղ մշակվող նյութերի ծավալը գերազանցում է օրական 10 տոննան,
- կայանքներ կաշվի և մորթիների դաբադման համար, որոնցում արտադրատեսակների մշակման ծավալը գերազանցում է օրական 12 տոննան,
- սպանդանոցներ, որոնց հզորությունը գերազանցում է օրական 50 տոննա մսեղիքը,
- մշակում և վերամշակում սննդամթերքներ ստանալու հա-

մար հետևյալ նյութերից՝

ա) կենդանական հումքից բացի կաթից պատրաստի արտադրանքի արտադրման օրական 75 տոննան գերազանցող հզորությամբ.

բ) բուսական հումքից՝ պատրաստի արտադրանքի արտադրության օրական 300 տոննան գերազանցող հզորությամբ եռամսյակային միջին ցուցանիշը.

- կաթի մշակում և վերամշակում, երբ ստացվող կաթի քանակը գերազանցում է 200 տոննա եռամսյակային միջին ցուցանիշը,
- կայանքներ ընտանի կենդանիների, մսեղիքի կամ անասնաբուծության թափոնների հեռացման կամ վերամշակման համար, որոնց օրական հզորությունը գերազանցում է 10 տոննան.
- նյութերի, առարկաների կամ արտադրատեսակների մակերեսային մշակման համար նախատեսված կայանքներ՝ օրգանական լուծիչների օգտագործմամբ, մասնավորապես՝ կայանքներ հարդարման, տպագրման, ծածկույթի, յուղագրկման, ջրամեկուսացման, ստանդարտացման, ներկման, մաքրման կամ ներծծման համար, որոնց օրական հզորությունը գերազանցում է 150 կգ կամ 200 տոննա տարեկան հզորությունը,
- կայանքներ ածխածնի, բնական կոքսի կամ էլեկտրագրաֆիտի արտադրության համար՝ այրման կամ գրաֆիտիզացիայի միջոցով:

20. Վերը նշված 1-19-րդ կետերում չհիշատակված ցանկացած տեսակի գործունեություն այն դեպքերում, երբ հասարակայնության մասնակցությունը նախատեսվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացակարգի սահմաններում՝ ազգային օրենսդրությանը համապատասխան:

21. Սույն կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի դրույթները չեն կիրառվում վերոնշյալ ոչ մի ծրագրի նկատմամբ, որոնք իրականացվում են բացառապես կամ հիմնականում նոր մեթոդների կամ արտադրատեսակների հետազոտման, մշակման և ստուգման համար՝ 2 տարուց պակաս ժամանակով, եթե

միայն առկա չէ շրջակա միջավայրի կամ առողջության համար էական վտանգի հավանականություն:

22. Գործունեության ցանկացած փոփոխություն կամ ընդլայնում, որն ինքնին համապատասխանում է սույն հավելվածում սահմանված չափանիշներին/սահմանային մեծություններին, կարգավորվում է սույն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետով: Գործունեության ցանկացած այլ փոփոխություն կամ ընդլայնում կարգավորվում է սույն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով:

Ծանոթություններ

1. Ատոմային էլեկտրակայանները և այլ ատոմային ռեակտորները դադարում են լինել այդպիսի կայանքներ, երբ ամբողջ միջուկային վառելիքը և այլ ռադիոակտիվությամբ աղտոտված տարրերը վերջնականապես հեռացվում են կայանքի արդյունաբերական տարածքից:

2. Սույն Կոնվենցիայի նպատակներից ելնելով՝ «օդանավակայան» նշանակում է օդանավակայան, որը համապատասխանում է 1944 թվականի Չիկագոյի կոնվենցիայում նշված սահմանմանը /Հավելված 14/, որով հիմնադրվում է Քաղաքացիական Օդանավագնացության Միջազգային Կազմակերպությունը:

3. Սույն Կոնվենցիայի նպատակներից ելնելով՝ «արագընթաց ճանապարհ» նշանակում է ճանապարհ, որը համապատասխանում է 1975 թվականի նոյեմբերի 15-ի Ավտոմոբիլային Ճանապարհների մասին Եվրոպական Համաձայնագրում նշված հիմնական սահմանմանը:

Հավելված 2

ԱՐԲԻՏՐԱԺ

1. Վեճն արբիտրաժային քննության հանձնելու դեպքում, սույն Կոնվենցիայի 16-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, Կողմը կամ Կողմերը տեղեկացնում են քարտուղարությանը արբիտրաժային քննության առարկայի մասին՝ մատնանշելով սույն Կոնվենցիայի այն հոդվածները, որոնց մեկնաբանման կամ կիրառման կապակցությամբ առաջացել է վեճը: Քարտուղարություն ստացված տեղեկատվությունն ուղարկում է սույն Կոնվենցիայի բոլոր Կողմերին:

2. Արբիտրաժային դատարանը բաղկացած է երեք անդամից: Ինչպես վեճի մասնակից հայցվոր Կողմը կամ հայցվոր Կողմերը, այնպես էլ մյուս Կողմը կամ Կողմերը նշանակում են մեկական արբիտր: Այս կարգով նշանակված երկու արբիտրները փոխադարձ համաձայնությամբ ընտրում են երրորդին, որն իրականացնում է արբիտրաժային դատարանի նախագահի գործառույթները: Վերջինս չի կարող վեճի կողմերից մեկի քաղաքացին լինել կամ վեճի կողմերից մեկի տարածքում մշտական բնակության վայր ունենալ, չի կարող գտնվել ծառայության մեջ վերջիններիս մոտ կամ ցանկացած այլ կարգավիճակով գործի հետ կապ ունենալ:

3. Եթե երկուրդ արբիտրի նշանակումից հետո երկու ամսվա ընթացքում արբիտրաժային դատարանի նախագահ չի նշանակվել, ապա վերջինիս հաջորդող երկու ամիսների ընթացքում նշանակում է Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Գործադիր քարտուղարը՝ Կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով:

4. Եթե խնդրանքը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում վեճի Կողմերից մեկն արբիտր չի նշանակում, ապա մյուս Կողմը կարող է այդ մասին տեղեկացնել Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Գործադիր քարտուղարին, որը հաջորդող երկու ամիսների ընթացքում նշանակում է արբիտրաժային դատարանի նախագահ: Նշանակումից հետո արբիտրաժային դատարանի նախագահը դռնս արբիտր չնշանակած Կողմին խնդրում է երկու ամսվա ընթացքում նշանակել արբիտր: Եթե նույն ժամանակա-

հատվածում Կողմը նշանակում չի կատարում, ապա նախագահին այդ նախին տեղեկացնում է Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Գործադիր քարտուղարին, որը հաջորդող երկու ամիսների ընթացքում նշանակում է այդ արբիտրին:

5. Արբիտրաժային դատարանը որոշումը կայացնում է միջազգային իրավունքին և սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

6. Սույն հավելվածին համապատասխան կազմավորված ցանկացած արբիտրաժային դատարան մշակում է իր ընթացակարգային կանոնները:

7. Ինչպես ընթացակարգային, այնպես էլ ըստ էության հարցերի կապակցությամբ արբիտրաժային դատարանը որոշումներն ընդունում է անդամների ձայների մեծամասնությամբ:

8. Դատարանը փաստերը վեր հանելու համար կարող է կիրառել բոլոր անհրաժեշտ միջոցները:

9. Վեճի Կողմերն օժանդակում են արբիտրաժային դատարանին՝ օգտագործելով իրենց տրամադրության տակ եղած միջոցները, մասնավորապես՝

ա) տրամադրում են անհրաժեշտ համապատասխան փաստաթղթեր, միջոցներ և տեղեկատվություն,

բ) անհրաժեշտության դեպքում դատարանին հնարավորություն են ընձեռում կանչել վկաներ և փորձագետներ և լսել վերջիններիս ցուցմունքները:

10. Վեճի Կողմերը և արբիտրաժային դատարանի անդամները ապահովում են արբիտրաժային դատարանում գործի քննության ընթացքում իրենց հայտնի դարձած ցանկացած տեղեկատվություն գաղտնիությունը, որը ստացել են գաղտնիության չբացահայտման պայմանով:

11. Արբիտրաժային դատարանը Կողմերից յուրաքանչյուրի միջնորդությամբ կարող է երաշխավորել պաշտպանության ժամա-

նակավոր միջոցների կիրառում:

12. Եթե Կողմերից մեկը չի ներկայանում արբիտրաժային դատարան կամ չի մասնակցում գործի քննությանը, մյուս Կողմը կարող է խնդրել դատարանին շարունակել գործի քննությունը և կայացնել վերջնական որոշում: Դատարանում Կողմերից մեկի բացակայությունը կամ արբիտրաժային քննությանը չմասնակցելը չի խոչընդոտում գործի քննությանը:

13. Արբիտրաժային դատարանը կարող է լսել նաև վեճի էությունից անմիջականորեն բխող հակընդդեմ հայցերը և կայացնել որոշում դրանց վերաբերյալ:

14. Եթե արբիտրաժային դատարանն այլ բան չի որոշում, ապա, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, դատական ծախսերը՝ ներառյալ դատարանի անդամներին վճարվելիք գումարները, Կողմերը կրում են հավասարապես: Դատարանը հաշվարկում է բոլոր ծախսերը և վեճի Կողմերին է ներկայացնում այդ ծախսերի վերջնական հաշվետվությունը:

15. Սույն Կոնվենցիայի ցանկացած Կողմ, որը վեճի առարկայի նկատմամբ ցուցաբերում իրավական շահագրգռվածություն, և որին կարող է վերաբերել տվյալ գործով կայացվող որոշումը, դատարանի համաձայնությամբ կարող է մասնակից դառնալ գործի քննությանը:

16. Արբիտրաժային դատարանը որոշումը կայացնում է իր կազմավորումից հետո հինգ ամսվա ընթացքում, եթե անհրաժեշտ չի համարում այդ ժամկետը երկարաձգել հինգ ամիսը չզերազանցող ժամկետով:

17. Արբիտրաժային դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված: Այն վերջնական է և պարտադիր վեճի բոլոր Կողմերի համար: Արբիտրաժային դատարանն իր որոշումն ուղարկում է վեճի Կողմերին և Քարտուղարություն: Քարտուղարությունը որոշումն ուղարկում է սույն Կոնվենցիայի բոլոր Կողմերին:

18. Գատարանի որոշման մեկնաբանման և կիրառման հետ կապված Կողմերի միջև առաջացած ցանկացած վեճ, Կողմերից յուրաքանչյուրը կարող է հանձնել այդ որոշումը կայացրած արբիտրաժային դատարան, իսկ վերջինիս ծառայություններից օգտվելու անհնարինության դեպքում՝ այս նպատակով և վերը նշված կարգով ստեղծվող այլ դատարան:

«Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեյատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի Կոնվենցիայի մասնակիցների ցանկ

- | | |
|------------------------|------------------------|
| 1. Ադրբեջան | 25. Հունաստան |
| 2. Ալբանիա | 26. Հունգարիա |
| 3. Ավստրիա | 27. Ղազախստան |
| 4. Բելգիա | 28. Մալթա |
| 5. Բելոռուս | 29. Մակեդոնիա |
| 6. Բուլղարիա | 30. Մեծ Բրիտանիայի և |
| 7. Գերմանիա | Հյուսիսային Իռլանդիայի |
| 8. Դանիա | միացյալ |
| 9. Եվրոպական Միություն | թագավորություն |
| 10. Էստոնիա | 31. Մոլդովա |
| 11. Թուրքմենստան | 32. Մոնակո |
| 12. Իռլանդիա | 33. Նիդեռլանդներ |
| 13. Իսլանդիա | 34. Նորվեգիա |
| 14. Իսպանիա | 35. Շվեդիա |
| 15. Իտալիա | 36. Շվեյցարիա |
| 16. Լատվիա | 37. Չեխիա |
| 17. Լեհաստան | 38. Պորտուգալիա |
| 18. Լիխտենշտեյն | 39. Ռումինիա |
| 19. Լյուքսեմբուրգ | 40. Սլովենիա |
| 20. Լիտվա | 41. Վրաստան |
| 21. Խորվաթիա | 42. Տաջիկստան |
| 22. Կիպրոս | 43. Ուկրաինա |
| 23. Կիրգիզիա | 44. Ֆինլյանդիա |
| 24. Հայաստան | Ֆրանսիա |